



04-ը սեպտեմբերի 2010թ.

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1984-ին Ֆրանսիայում ծնունդ առած «Բաց դռների օր պատմական հուշարձաններում» նախաձեռնությունը 1991-ից դարձավ Եվրոպայի խորհրդի նախագիծ՝ կնքվելով «Եվրոպական ժառանգության օրեր» անվամբ: 1999-ից այն Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ ձեռնարկ է և կրում է «Եվրոպա. ընդհանուր ժառանգություն» կարգախոսը: Հուշարձաններն ու տեսարժան վայրերը եվրոպական հանրության համար բաց ու հասանելի դարձնելու միջոցով Օրերը քարոզում են Եվրոպայի միասնությունը՝ համախմբելով Եվրոպական Մշակութային կոնվենցիային անդամակցող երկրներին: Այս տարի արդեն 25-րդ անգամ Եվրոպայի միլիոնավոր քաղաքացիներ իրենց համերաշխությունը կհայտնեն սպասված ու հաջողված նախագծին՝ հատուկ միջոցառումներով և այցելություններով նոր շունչ հաղորդելով պատմական վայրերին ու հուշարձաններին: 1997-ին վավերացնելով Եվրոպական մշակութային կոնվենցիան, իսկ 2001-ից դառնալով Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ՝ Հայաստանը հաստատել է իր պատկանելությունը Եվրոպային: Այս սեպտեմբերի 18-19-ին Հայաստանում մեկնարկող Եվրոպական ժառանգության օրերին իր մասնակցությունը կբերին նաև «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը՝ Օրերի նշանակության համատեքստում իր դռները բացելով հանրության առջև:

2010թ. սեպտեմբերի 18-ին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը «ԻԿՕՍՄՍ/Հայաստան» հասարակական կազմակերպության, Տուրիզմի հայկական ինստիտուտի և Հայաստանի ազգային պարարվեստի միության գործընկերությամբ կմիանա համաեվրոպական Օրերին՝ հատուկ միջոցառմամբ շեշտելով բազմազանություններով հարուստ Եվրոպայի միասնությունը:

Պատմամշակութային ժառանգությունը դիտարկելով որպես հզոր միջոց երիտասարդ սերնդի դաստիարակության համար՝ թանգարանը հանդես կգա եվրոպական ժողովուրդների պատմամշակութային ժառանգությունները ներկայացնող լուսանկարների ցուցահանդեսով՝ ընտրված «Հուշարձանների լուսանկարման միջազգային փորձ» նախագծի մասնակիցների աշխատանքներից: Ցուցահանդեսը կկրի «Կտոր մը Եվրոպա. մեծ զբոսանք» խորագիրը, որի բացման շրջանակում կներկայացվի նաև Կատալոնիայի համակարգմամբ արդեն 15 տարի ընթացող «Հուշարձանների լուսանկարման միջազգային փորձ-2010» մրցույթի կատալոգը: Ցուցահանդեսի նպատակն է ամրապնդել հարգանքը սեփական և այլոց մշակույթների նկատմամբ, պատմամշակութային ժառանգության ճանաչողությանը հաղորդել լայն ընդգրկում և այս կերպ նպաստել միջմշակութային ու տարաշածրջանային երկխոսությանը, Հայաստանի քաղաքացիների եվրոպական ինտեգրմանն ու նրանց մեջ եվրոպական ինքնության գիտակցմանը:

Միջոցառումը կմեկնարկի Եվրոպայի ժողովուրդների ազգային պարերի բեմադրությամբ՝ ի ցույց դնելով պարի՝ տարբեր ծագումներ, դավանանքներ ու մշակույթ

ունեցող ժողովուրդների միջև հաղորդակցության միջոցի կենսունակությունը, ինչպես նաև ժառանգության նյութական ու ոչ-նյութական տարրերի միասնությունը: Միջոցառման մասնակիցներին կողջունեն և օրվա խորհուրդը հիշեցնող խոսքով հանդես կգան հանրապետության մշակույթի, կրթության ու գիտության բնագավառի ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ ու պատասխանատուներ:

Յուրահանդեսի դիտումից հետո հյուրերին և մասնակիցներին կառաջարկվի հատուկ ճանաչողական էքսկուրսիա «Էրերունի. այստեղից է սկսում Երևանը» խորհրդանշական կարգախոսով:

Միջոցառումը կմեկնարկի 2010թ. սեպտեմբերի 18-ին, ժամը 11:00-ին:

***«Էրերունի» պատմահնագիտական արձելոց-թանգարան***